



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

№ 50-ՉԿ/Ձ

«29» 05 2016թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 25-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ  
ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ 25-ՐԴ ՄԱՐՁԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ  
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետը .

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել «ՀՀ անկախության 25-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 25-րդ մարզական խաղերի կազմակերպման և անցկացման կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. 2016 թվականի փետրվար-հուլիս ամիսներին անցկացնել «ՀՀ անկախության 25-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 25-րդ մարզական խաղերը»:
3. Նախարարության աշխատակազմի մարզառազմական և արտաուսումնական դաստիարակության վարչությանը՝ (պետ՝ Ա.Այվազյան)

- 1) Իրականացնել մարզական խաղերի ընդհանուր ղեկավարման, կազմակերպման և անցկացման գործընթացները:
- 2) ՀՀ մարզերում և Երևան քաղաքում «Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիա» և «Աշխատանքային ռեզերվներ» ՀԿ-ների հետ համատեղ կազմակերպել ուսուցողական խորհրդակցություններ՝ ՀՀ անկախության 25-րդ հորեյանին նվիրված մարզական խաղերի բոլոր փուլերը հանդիսավոր և պատշաճ մակարդակով լավագույնս նախապատրաստելու և անցկացնելու նպատակով:
- 3) 2016 թվականի հուլիսին «Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիա» և «Աշխատանքային ռեզերվներ» ՀԿ-ների հետ համատեղ ամփոփել

մարզական խաղերի արդյունքները և տեղեկացնել ՀՀ մարզպետներին և Երևանի քաղաքապետին:

4. Մարզական խաղերի գլխավոր մրցավար նշանակել «Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիա» ՀԿ նախագահ՝ Արա Մեհրաբյանին:
5. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել նախարարի տեղակալ Մանուկ Մկրտչյանին:



/ ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ